ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1959 Общественные науки

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ 1917—1920 ԹԹ. ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅԻ ՄԱՍԻՆ[1]

1917—1920 թվականների հայ պոեզիան, լինելով մեր ժողովրդի կյանքի ամենակրիտիկական շրջաններից մեկի յուրօրինակ գեղարվեստական արտացոլումը, մեծ հետաքրքրություն է ներկայացնում սովետահայ գրականագիտության համար։ Նախ՝ որ այս շրջանի մեր պոեզիան քիչ ուսումնասիրված մի բնագավառ է և հետո այդպիսի ուսումնասիրությունն ավելի քան անհրաժեշտ է նամանավանդ այն պատճառով, որ ուղղակի կամ անուղղակի բազմաթիվ փորձեր են եղել ժիտելու այդ տարիների մեր գրականության ակնհայտ արժեքները, բանն այնպես ներկայացնելով, թե իբր ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած մեծ հեղաբեկումների այդ ժամանակաշրջանում «...լռել էին բոլոր հին գրողները։ Ամբողջ տարիներ ոչ մի արժեքավոր գործ հրապարակ չէր գալիս», իբրև թե «...գոյություն ուներ միմիայն նացիոնալիստական մոտիվների ականջ խլացնող թմբկահարություն»։

Հովհ. Ղազարյանը իր հավաքած հարուստ նյութի վերլուծությամբ հերքում է այս թյուր տեսակետները և օբյեկտիվորեն արժեքավորելով գրական արտադրանքը, փորձում է ի մի բերել 1917—1920 թվականներին հայ պոեզիայի ձեռք բերած նվաճումները։ Աշխատության դրական կողմերից պետք է համարել այն, որ հեղինակը այդ տարիների մեր պոեզիան դիտում և քննարկում է ամբողջ հայ գրականության զարգացման ֆոնի վրա, այդ ամենը կապելով տվյալ ժամանակաշրջանի պատմական կոնկրետ իրադարձությունների հետ։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան բախտորոշ նշանակություն ունեցավ Ռուսաստանի բոլոր ազգերի և ժողովուրդների, այդ թվում նաև հայերի համար։ Ճարկված ու զրկված հայ ժողովուրդը միանգամից կողմնորոշվեց դեպի նոր Ռուսաստանը, ռևոլյուցիայի մեջ տեսնելով իր լավագույն իդեալների կենսագործումը. դարերով երազած փրկության ուղին։ Ռևոլյուցիայի ազդեցության տակ էլ տեղի է ունենում նրա քաղաքական և գեղարվեստական հայացքների արմատական բեկումը։

Սկսվում է հայ գրականության և առանձնապես պոեզիայի պատմության ամենահետաքրքրական շրջաններից մեկը։ Ռևոլյուցիան իր հուժկու դինամիկայով, իր հեղաշրջիչ և կենսահաստատ ուժով գրողներին մղում է ստեղծագործական նոր որոնումների։ Ստեղծվում է մեր կլասիկ գրականության լավագույն տրադիցիաները շարունակող միանգամայն ինքնատիպ ու բազմաժանր, քաղաքականապես նպատակասլաց պոեզիա, ռևոլյուցիայի նվաճումները հաստատող, պայքարի կոչող, բոցաշունչ մարտական պոեզիա, որ կրկին ու կրկին հաստատում է այն ճշմարտությունը, թե

---

[1] *Հովհ. Ղազարյան, Հայ պոեզիան 1917—1920 թվականներին, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1958 թ.։*

Ժողովրդի քնարը երբեք
Չի կարող ստել...

Ռևոլյուցիայի բանաստեղծական արձագանքներն են ոչ միայն հայ պրոլետարական գրականության վետերանների, այլև մեր կլասիկայի կարկառուն դեմքերի այդ տարիների ստեղծագործությունները։ Ամբողջովին ռևոլյուցիոն իրազարձություններով հարուստ այդ ժամանակաշրջանի ծնունդ են Թումանյանի «Թագավորն ու շարքին», «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» ստեղծագործությունները, քառյակների մի զգալի մասը, Իսահակյանի «Սասմա Մհերը», Տերյանի ռևոլյուցիոն խոր լավատեսությամբ հագեցած քաղաքական լիրիկայի փայլուն նմուշները։

Ռևոլյուցիոն այս ժամանակաշրջանի արգասիք են Ա. Վշտունու արևելյան ժողովուրդների ռևոլյուցիոն զարթոնքը մարմնավորող երկերը, Չարենցի աշխատավորական մասսաներին ոգեշնչող, նրանց ազատասիրական զգացմունքներին ուղղություն տվող ռևոլյուցիոն, մարտաշունչ պոեզիան։

Աշխատության մեջ առանձին գլուխներ են նվիրված Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Հ. Հակոբյանի, Շ. Կուրղինյանի, Ե. Չարենցի, Ա. Վշտունու ստեղծագործություններին։

Հաջողված է Իսահակյան բաժինը, ուր հեղինակն առանձնապես մանրամասն է խոսում «Սասմա Մհեր» վիպերգի մասին։ Քննարկում է նրա վարիանտները, շեշտը դնում պոեմի գաղափարական նպատակասլացության վրա, ցույց տալիս, որ Իսահակյանը Մհերի մեջ մարմնավորում է ժողովրդի անխորտակելի ուժը, կենսունակությունը, աշխատանքի անսպառ եռանդը, նրա ազատասեր ոգին և դարեր մշակած կենսափիլիսոփայությունը։

Առանձին բաժնում խոսվում է կոմունիստ գրողներ Հակոբ Կամարու, Սեյրիի, Ավագ Կոծինյանի, Խորեն Լոռենցի և ուրիշների ստեղծագործությունների մասին, ցույց տրվում, որ թեև գրանց մեծ մասը թույլ են իրենց արտահայտչական միջոցներով, բայց տոգորված են խոր լավատեսությամբ, ռևոլյուցիայի հաղթանակի նկատմամբ ունեցած անշեջ հավատով։ Հեղինակն այնուհետև կանգ է առնում 1917—1920 թվականներին իրենց ստեղծագործական առաջին քայլերն անող մի շարք բանաստեղծների ստեղծագործությունների վրա, նշում է, որ նրանց մոտ թեև դեռևս չի զգացվում Հոկտեմբերյան ռևոլյուցիայի շունչը, և նրանք երգում են իրենց մերժված սերը, հայկական կոտորածներն ու գաղթը, երգում են պանդխտության սրտամորմոք երգերը, բայց այս ամենի մեջ կա նոր, պայծառ օրերի և խաղաղության բաղձանք, լավատեսական մի տրամադրություն, որ տիրական ու համակող ուժ է դառնում նրանց ստեղծագործության մեջ։

Գրական փաստերի վերլուծությունից հեղինակը եզրակացնում է, որ 1917—1920 թվականների հայ պոեզիան իր էությամբ ժողովրդային պոեզիա է, որը ներծծված է պրոլետարիատի դասակարգային պայքարի հաղթանակի հավատով, ժողովուրդների բարեկամության և խաղաղության գաղափարներով։

Վեր հանելով այս տարիների հայ պոեզիայի բնորոշ գծերը, Ղազարյանը փորձում է բացահայտել մեր հեղինակների արվեստը, նրանց բանաստեղծական խոսքն ավելի էմոցիոնալ ու նպատակասլաց դարձնող արտահայտչական միջոցներն ու հնարանքները։ Սակայն երբեմն չափից ավելի ուշադրություն դարձնելով հարցի այդ կողմին, հեղինակն ընկնում է ծայրահեղությունների

մեջ։ Աշխատության 76-րդ էջում Ղազարյանը պնդում է թե «Հոկտեմբերյան ռևոլյուցիայի օրերին փոխվում է Տերյանի ստեղծագործության նաև Հնչյունական կառուցվածքը (այս և հետագա ընդգծումները մերն են — Հ. Դ.), այդ ժամանակաշրջանում ստեղծված մարտաշունչ ու լավատեսական երգերում, պոետը հեռանում է թույլ ու մեղմ ձայնավորների (ու, ի), խուլ ու փակ բաղաձայնների (ս, մ, ն և այլն) գործածությունից և ավելի մղվում դեպի բաց ու պայծառ ձայնավորները (ա, օ), պայթող ու հնչեղ բաղաձայնները (դ, ղ, ջ և այլն)։

Իսկ այս դրույթը հաստատելու համար նա բերում է բանաստեղծի հետևյալ քառաստողը։

Ջարդեցե՛ք անդուլ, անգութ, անխնա,
Ջնջեցեք աշխարհն ապական ու հին.
Թող քարը քարի վրա չմնա,
Ողջը մատնեցեք հրին ու մահին։

Ղազարյանը չի նկատում, որ հենց այստեղ Տերյանը ժխտում է իր բերած փաստարկը՝ միայն առաջին տողում գործածելով 4 ն։

Անհրաժեշտություն կա արդյոք ասելու, թե այսպիսի պնդումը միանգամայն սխալ է ու զուրկ գիտական որևէ հիմքից։ Այս կամ այն կոնկրետ պայմաններում կարող է փոխվել գրողի բառապաշարը, դարձվածաբանությունը, բայց երբեք չի կարող փոխվել հնչյունական կառուցվածքը։ Լեզվի հնչյունական կառուցվածքը փոխվում է դարերի ընթացքում, աստիճանաբար, աննկատելի կերպով։

Ղազարյանը հնչյուններին վերագրում է ինչ-որ գաղտնի իմաստ, պնդելով թե բաց ու պայծառ ձայնավորները, պայթող ու հնչեղ բաղաձայնները լավատեսական, մարտական շունչ են հաղորդում Տերյանի ստեղծագործություններին։ Իսկ ինչ կասի նա, օրինակ դողդոջ բառի մասին, որը կազմված է հենց իր գովերգված հնչյուններից. ո՞րն է այստեղ «մարտական շունչը»։

Այս կարգի թերությունները մասնակի են Հ. Ղազարյանի գրքում։ Ընդհանուր առմամբ այն ճիշտ պատկերացում է տալիս 1917—1922 թթ. հայ պոեզիայի մասին։

Հ. Դ. ԴԱՐԲԻՆՅԱՆ